ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

30.07.2020 15:56

ՀՀ փաստաբանների պալատը և Ինֆորմացիայի ազատության կենտրոնը համատեղ նախաձեռնում են տեղեկատվության ազատության ոլորտում ռազմավարական դատական նոր գործերի ստեղծում: Մասնագիտական այս փորձառու կառույցների համատեղ ջանքերի նպատակն է ապահովել տեղեկատվության ազատության օրենսդրության պատշաճ կիրառումը ՀՀ-ում և իրականացնել տեղեկություն ստանալու խախտված իրավունքի դատական պաշտպանություն:

Մինչ 2018 թվականը այս ոլորտում ԻԱԿ-ը նախաձեռնել և իրականացրել է շուրջ 70 դատական գործ, որոնց 75 տոկոսն ավարտվել է դրական արդյունքով: Դատական ակտերի հիման վրա կազմակերպությունը և իր շահառուները ստացել են մինչ այդ մերժված տեղեկությունները: Տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության կարևորագույն երաշխիք համարվող այս պրակտիկան առաջիկայում կշարունակվի ՀՀ փաստաբանների պալատի աջակցությամբ և համատեղ ջանքերով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })